89

աշխատանքի 8

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 12/09

ք.Երևան 07. XII 2009թ.

«ՖԿ&Գ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս. Մելիքյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մի կողմից, եւ 22 ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը, ի դեմս 22 Գլխավոր հարկադիր կատարող Մ.Պողոսյանի որը գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մյուս կողմից, միասին՝ այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է տրամադրել կապուղիներ 22 Ոստիկանության գերատեսչական համակարգչային ցանցին, այսուհետեւ «Ոստիկանության» ցանց, միանալու համար և իրականացնել դրանց սպասարկումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը իրականացնում է անհրաժեշտ գործողություններ Պայմանագրի 1-ին բաժնում հիշատակված Ծառայությունները պատշաճ որակով Պատվիրատուին մատուցելու համար: Այդ ծառայությունների դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Պայմանագրի 3-րդ բաժնում նշված պայմաններին համապատասխան:

2.2 Կողմերը պարտավորվում են պատշաճ որակով և պայմանագրով սահմանված ժամկետներում կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2.3 Կատարողին իրավունք է վերապահվում պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնելու նպատակով ժամանակավորապես անջատել (պրոֆիլակտիկ անջատումներ) Պատվիրատուի կապը « Ոստիկանության » ցանցից, նախապես համաձայնեցնելով նրա հետ պրոֆիլակտիկ անջատումների ժամերը, սակայն չգերազանցելով 12 ժամ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:

2.4 Կատարողը պարտավորվում է սեղմ ժամկետներում վերացնել Պայմանագրի առարկայի հետ կապված և իր մեղքով առաջացած (բացի պրոֆիլակտիկ անջատումներից) կապի խափանումները, դրանք հայտնաբերելուց կամ դրանց մասին Պատվիրատուի կողմից տեղեկացվելուց հետո:

2.5 Այն դեպքում, երբ կապի խափանումները տեղի չեն ունեցել Կատարողի մեղքով, վերջինս վերահսկում և ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ այն վերացնելու ուղղությամբ:

2.6 Պատվիրատուն պարտավորվում է չօգտագործել « Ոստիկանության » ցանցն անօրինական կերպով, որը կհանգեցնի այլ անձանց հեղինակային իրավունքների խախտմանը, ինչպես նաև «Ոստիկանության» ցանցով չհաղորդել և չտարածել ոչ պատշաճ արտահայտություններ կամ կոմպյուտերային վիրուսներ:

2.7 Կատարողը պատասխանատու չէ Պատվիրատուի կողմից «Ոստիկանության» ցանցում փոխանցվող ինֆորմացիայի բովանդակության համար:

2.8Կատարողը պարտավորվում է չտեղեկանալ, չօգտագործել և իր իրավասության սահմաններում երրորդ անձին չտեղեկացնել Պատվիրատուի կողմից «Ոստիկանության» ցանցով փոխանցվող տեղեկատվության բովանդակության մասին: Կատարողը երաշխավորում է ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների պահպանումը:

2.9 Կատարողը պատասխանատու չէ կապի ծառայությունների խափանման հետևանքով Պատվիրատուի կրած ուղղակի կամ անուղղակի վնասների համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Յուրաքանչյուր կապուղու տրամադրման համար Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի վճարել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարած ԱԱՀ 20% 10000 (տաս հազար) ՀՀ դրամ ընդամենը 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

3.1.Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրի 1.1 կետով նախատեսված ծառայությունների ապահովման համար Կատարողին վճարել յուրաքանչյուր կապուղու համար ամսական՝ 2400 (քսաչորս հազար) ՀՀ դրամ գումարած ԱԱՀ 20% 4800 (չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ ընդամենը 28000 (քսանութ հազար) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարումները կատարում է Կատարողի կողմից ներկայացրած հարկային հաշվի հիման վրա՝ 10 (տասը) բանկային օրվա ընթացքում:

3.4. Սույն պայմանագրով սահմանված վճարումները համարվում են կատարված՝ վճարվող գումարը Կատարողի բանկային հաշվին մուտքագրվելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2009թ.-ի դեկտեմբերի 10-ից, գործում է 1 (մեկ) տարի երկարացվում է հերթական 1 (մեկ) տարով, եթե Կողմերից ոչ մեկը Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր չի տեղեկացրել մյուս կողմին Պայմանագիրը լուծարելու ցանկության մասին:

4.2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է վաղաժամկետ լուծարել սույն Պայմանագիրը, այդ մասին նախապես 30 (երեսուն) օր առաջ՝ գրավոր ձևով ծանուցելով մյուս Կողմին:

4.3. Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

5.2. Կողմերը պատասխանատվություն չեն կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման համար, եթե դա հետևանք է նրանցից անկախ վրա հասած անհաղթահարելի իրադարձություններով (Ֆորս-մաժոր):

5.3. Պայմանագրով չկարգավորված կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

5.4 Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.5 Սույն Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքները և պարտականություններն անցնում են նրանց իրավահաջորդներին:

5.6 Պայմանագիրը կազմված է 2 (երկու) իրավահավասար օրինակներից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ

«ՖՎ&Գ» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության,24
Հեռ: 374 10 208172
Ֆաքս: 374 10 208173
e-mail: FVG.LLC@rambler.ru
Արմավիրբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010520[illegible]10
ՀՎՀՀ 03004979

Տնօրեն
Ս. Մելիքյան

Պատվիրատու

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն
ք.Երևան, Հալաբյան 41ա
հեռ; ֆաքս: 39-30-02
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900013288023, 900011288025
Կենտ.գանձապետարանի գործառնական վարչ.

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

Մ.ՊՈՂՈՍՅԱՆ ______________